

հանուր երևույթ է եղել, մանավանդ որ ամեն ոք լեզուն խմբագրել է իր իմացած գրաբարով, առանց հաշվի առնելու ստորին կամ միջին հայերենի և բարբառների գոյությունը միջին դարերում: Այդ բոլորի նշումը ժողովածուի ծավալը շատ կմեծացներ: Նույնիսկ շատ անգամ չենք նշել, երբ հրատարակիչները փոխել են արձանագրությունների բառերն ու նրանց շարադասությունը: Այսպես, օրինակ, չենք նշել 105-րդ արձանագրության Զալալյանցի վերծանության հետևյալ տարբերությունները.

<b>Մեր վերծանությունը</b>		<b>Հստ Զալալյանցի</b>	
6-րդ տող. Արդ որ գնա	Արդ որ գնա	հանել հնա-	Սանահնէս հանել հնարի
14-րդ տող. Շապհկանն	Շապհկանն	առնել	մատուցանել
14—15 տող. Եւ որ այս	Եւ որ այս	հանել	ջանայ լճոխս հակառ կա
		կամ	հակառակի

Ստորև զետեղում ենք մի տողանի № 106 արձանագրության մեր և Զալալյանցի վերծանությունները, ցույց տալու համար, թե ինչքան մեծ է նրանց մեջ եղած լեզվական տարբերությունները:

<b>Մեր վերծանությունը</b>		<b>Հստ Զալալյանցի</b>	
Կամաւն Ա(ստուծոյ), ես	Կամաւն Աստուծոյ, ես	Զաղէլ ամիր չէճիպս միա-	Ձինաղէս և մայր իմ չա-
բանեցա Մը Ա(ստուա)-	Մստուածածնիս ևս հայր	ծածնիս, հայրս Յոհանէս	ճիպս միաբանեցաք սուրբ
և և միաբանքս ի տաւնի	Յօհանէս և եղբորքս	աւետե(ա)ց Ա(ստուած)-	տվաք սուրբ Աստուա-
ծածնիս ետուն զամ(էն)	ծածնայ տաւնիս պատա-	եկեղեցիքս պատարագ:	բազ անխափան:

Հայերեն վիմական արձանագրությունների գիտական հրատարակությունների սկիզբը նոր չէ որ դրվում է: Դեռևս մեր դարի տասնական թվականների սկզբին ակադեմիկոսներ Ն. Մառն ու Հ. Օրբելին հատուկ արձանագրական առանձին և միացյալ տառաձևեր պատրաստեցին և «Христианский Восток» գիտական հանդեսում և առանձին գրքույկներով սկսեցին հրատարակել մի շարք հայերեն վիմական արձանագրություններ, բայց այդ գործը շատ շուտ ընդհատվեց վրա հասնող առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Այժմ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան իր գիտական հաստատությունների միջոցով սկսում է հրատարակել հայերեն վիմական արձանագրությունների ժողովածուներն առանձին պրակներով, որպես ամբողջի առանձին մասեր:

\* \* \*

Սանահնի վիմական արձանագրությունները լավ չեն պահպանվել և մեծ մասամբ դժվար են կարդացվում: Նրանցից 36-ը եղծված են՝ գրերը մաշված, քարերն ընկած կամ կից շինությունների պատերի տակ մնացած լինելու պատճառով:

Գծագրական ոճի տեսակետով Սանահնն ու Հաղբատը խիստ կերպով ինքնուրույն են և շատ են տարբերվում Շիրակից, Արագածոտնից, Սյունիքից և Կոտայքից: Արձանագրությունների ոճով Սանահնն ու Հաղբատը միմյանց հետ մի ամբողջություն են կազմում և միևնույն դպրոցի կենտրոններն են հանդիսանում: Նրանք իրենց ազդեցությունը տարածել են ամբողջ Լոռիի, Քոբայրի, Օձունի, Խոժոռնիի, նույնիսկ Կիրանցի, Առաքելոցի և բազմաթիվ այլ տեղերի վրա, բայց Հաղբածինը, Գոշալանքը, Խորանաշատը, Նոր Վարազավանքը համարյա թե դուրս են մնացել Սանահնի և Հաղբատի ազդեցությունից:

Սանահնի վիմագրական արվեստի առանձնահատկությունները կարելի է ամփոփել այսպես. արձանագրությունների գրերն ուղղաձիգ են, նրանց ձախակողմյան ելուստներն ուղիղ, նույնիսկ 14—15 և հետագա դարերում, երբ ընդհանրապես առաջ է գալիս գրերի ելուստների գլխահակությունը: Գրերի ստեղծները միմյանց հետ միանում են կանոնավոր և գեղեցիկ կիսաշրջան կամարներով: Գրերի լայնքը զուսպ է, ոչ այնքան լայն և ոչ այնքան նեղ, պատվով համառոտագրած բառերի թիվը սահմանափակ է և ամենուրեք հասկանալի: Ստորին և վերին եզրագծից դուրս ցցվող մասեր ունեցող գրեր համարյա թե չկան: Միացյալ գրերի թիվը թեև շատ է, բայց գրեթե ամենուրեք հասկանալի: Չի նկատվում ուշ ժամանակի (13—14-րդ դդ.) արձանագրությունների մեջ գրերը սեղմելու ուժեղ հակումը: Նույնիսկ S գրի վերին և ստորին կեռերն իրար գլխի